ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

136
(2802)

29 սեպտեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՔՊ-Ն ԹԵԺ ՔՆՆԱՐԿՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեքշաբթի երեկոյան Նիկոլ Փաշինյանը թեժ քննարկում է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների հետ: Հանդիպումը տեղի է ունեցել ԱԺ-ում եւ բավականին երկար է տեւել: Նիկոլ Փաշինյանը երեկոյան ուշ ժամի եկել է խորհրդարան ու մոտ 3 ժամ անց նոր հեռացել: Ինչպես իշխանական մեր աղբյուրներն են հայտնում, Նիկոլ Փաշինյանը եւ ՔՊ-ականները քննարկել են Արցախում ստեղծված այս ծանր իրավիճակը, արցախահայերի տարհանման հետ կապված հարցերը, հոկտեմբերի 5-ին Գրանադայում սպասվող Փաշինյան-Ալիեւ հանդիպումը: Հիմնականում երկարաշունչ ելույթներ է ունեցել Փաշինյանը, իսկ ՔՊ-ականները լուռ լսել են նրան ու գլխով արել: Նիկոլ Փաշինյանն էլ, ինչպես իրեն է բնորոշ, էլի նոր մեղավորներ է նշանակել. ըստ նրա՝ Արցախում ստեղծված աղետալի վիճակի մեղավորները ռուսներն են, Արցախի իշխանությունները եւ հայաստանյան ընդդիմությունը, մի խոսքով, բոլորը, բացի իրենից: ՔՊ-ականների օրակարգում եղել են արտաքին քաղաքական եւ անվտանգային հարցեր. ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, ավագանու ընտրությունների հետ կապված հարցեր չեն քննարկել:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Արման Պետրոսյանը, վարչապետի որոշմամբ, ազատվել է աշխատանքից: Ըստ մեր տեղեկությունների՝ աշխատանքից անսպասելի հեռացումը կապված է Պետրոսյանի ծավալած գործունեության հետ: Ավելի կոնկրետ, ըստ մեր տեղեկությունների, ազատումը կապված է Ֆիրդուս թաղամասի տների վաճառքի հետ: Հիշեցնենք եւ ասենք, որ մենք բազմիցս ենք անդրադարձել այս խնդրին, որ Ֆիրդուս թաղամասի այժմ նախկին բնակիչներից պահանջել են լքել տները՝ խոստանալով փոխհատուցումներ տրամադրել՝ իրենց բնակարանների կադաստրային արժեքին համապատասխան: Հավելենք նաեւ, որ ավելի քան 5 հեկտար տարածքում ներկայացված նախագծով նախատեսվում է կառուցել 85 մ տրամագծով կլոր հրապարակ, նոր փողոցներ, հասարակական եւ սպասարկման օբյեկտներ, բիզնես կենտրոններ, հյուրանոցներ: Պետրոսյանին, ըստ մեր աղբյուրների, աշխատանքից ազատել են, քանի որ նա, գործ ունենալով Կադաստրային կոմիտեի հետ, բնակարանները գնահատել է կադաստրային արժեքից մի քանի անգամ ցածր գներով: Պետրոսյանը, կապ ունենալով գնահատող ընկերությունների հետ, նրանց հետ համաձայնության գալով, կեղծել է գումարի չափը: Այս տեղեկությունը պարզելուց հետո վարչապետ Փաշինյանը որոշում է կայացրել ազատվել նրանից:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ քաղաքական իշխանության ներսում անհանգստացած են: Բանն այն է, որ արցախից տեղահանված քաղաքացիներից շատերը բնակություն են հաստատել ընդդիմադիրներին պատկանող կամ նրանց հետ կապ ունեցող անձանց հյուրանոցներում կամ նրանց կողմից առաջարկված բնակության վայրերում: Արդյունքում քաղաքական իշխանությունները մտավախություն ունեն, որ ընդդիմությունը, արցախցիներին տեղավորելով իրենց կողմից հատկացված վայրերում, հետագայում այս փաստը կշահարկի իշխանության դեմ: Ասել է թե՝ իշխանության ներսում սպասում են բողոքի ալիքի երկրորդ փուլի:



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս տարվա օգոստոսի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 395,1 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 5 %-ով, իսկ 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 8.7 %-ով: ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 386.9 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 185.6 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 2022 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ 5.4 %-ով, 2022թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 9.4%-ով. ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 844.1 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին պարտքի 91%-ը Կառավարության պարտքն է, 9%-ը՝ Կենտրոնական բանկինը: Կառավարության արտաքին վարկերի ու փոխառությունների կազմում ամենամեծ կշիռը Համաշխարհային բանկինն է: Հայաստանի հաջորդ խոշոր վարկատուն Ասիական զարգացման բանկն է՝ 18.8% կշռով:

ԶՐՈՒՅՑ

ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԵՄ

Ազգային ժողովի պետահրավական հարցերով մշտական հանձնաժողովը երեկ միաձայն ընդունել է Հռոմի ստատուտը վավերացնելու մասին նախագիծը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ խմբակցության պատգամավոր Ալխաս Ղազարյանը նշեց, որ համաձայնագիրը վավերացրել են Ադրբեջանի դեմ պատժամիջոցների հասնելու համար:

-Տիկին Ղազարյան, չնայած բազմաթիվ դժգոհություններին, Ռուսաստանի կողմից հնչող կոշտ հայտարարություններին՝ Հայաստանի իշխանությունները, ամեն դեպքում, որոշեցին գնալ Հռոմի ստատուտը վավերացնելու ճանապարհով: Այսօր (երեկ-խմբ.) արդեն գլխադասային հանձնաժողովում է քննարկվել, առաջիկայում լիագումար նիստեր կգումարվեն, հիմնավորումն էլ հայաստանյան իշխանության այն է, որ սա հնարավորություն է տալիս, որ Ադրբեջանի դեմ միջազգային ատյաններում պատժամիջոցների հասնենք: Ռուսական կողմն ասում է, որ հակառուսական միտմամբ է այդ ամենն արել Հայաստանը: Ի՞նչ է մեզ սա տալիս ի վերջո, եթե վերջնական վավերացման հասնի, քանի որ առանց այդ էլ հարաբերությունները Ռուսաստանի հետ լարված են:

-Կուզենամ սկսել վերջից. պետք է նշեմ, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների լարվածությունը ես դեռեւս չեմ նկատում: Նաեւ չեմ ուզում Հռոմի ստատուտի վավերացման գործընթացը կապել այդ գործընթացների հետ, քանի որ, նախ՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ապա՝ Ազգային ժողովի պատգամավոր՝ մենք պետք է առաջինը մտածենք, թե ինչն է մեզ համար, մեր երկրի համար կարեւոր, եւ նախագծի քննարկման ընթացքում էլ իմ խոսքում նշեցի, որ քննարկվելու է այս օրերին ամենացավալին, որին ականատեսն ենք մենք: Խոսքը վերաբերում է մեր հայրենակիցների բռնի տեղահանմանը, որը միանշանակ իրավական չէ, ինչպես նաեւ 2021 թվականից Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ոտնձգությունների ժամանակ հանցագործությունների կանխարգելմանը: Հետագայում էլ նախատեսվում է կանխարգելիչ գործողությունների իրականացում, որպեսզի ավելի ուշ եւս կանխարգելվեն նման դեպքերը: Կարծում եմ՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ յուրաքանչյուրս պետք է առաջին հերթին մտածի Հայաստանի մասին:

-Տիկին Ղազարյան, մենք տեսնում ենք, որ միջազգային տարբեր ատյաններ որոշումներ են կայացրել, կոչ են արել, որ Ադրբեջանը դադարեցնի այս ագրեսիվ գործողությունները, բայց այդպես էլ որեւէ բան Ադրբեջանի վրա չի ազդել: Այժմ Հռոմի ստատուտը վավերացնելը ինչքանո՞վ է երաշխիք, որ կզսպվի Ադրբեջանը:

-Դե հնարավոր ամեն գործոն այս պարագայում, երբ մենք գտնվում ենք արտաքին եւ ներքին սպառնալիքների ներքո , հնարավոր բոլոր տեսակ գործիքներից, որոնք կարող են Հայաստանի համար օգուտ բերել, պետք է օգտվել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

«Մենք խստորեն դատապարտում եւ մերժում ենք Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 28-ի հայտարարությունն այն մասին, որ, իբր, Արցախում բնակվող հայ բնակիչները ենթարկվել են «էթնիկ զտումների»»,- հայտարարություն է տարածել Ադրբեջանի ԱԳՆ-ն:

«Այդ խոսքերը հակասում են Հայաստանի վարչապետի՝ սեպտեմբերի 21-ի հայտարարությանը, որում նա ասել էր, որ Ադրբեջանի կողմից հայ բնակիչներին վտանգ չի սպառնում, ինչպես նաեւ նպատակ ունի խաթարելու Ադրբեջանի մարդասիրական աջակցությունն ու վերաինտեգրման ջանքերը»,- նշված է հաղորդագրությունում:

ԱԳՆ-ից հայտնում են նաեւ, որ Արցախում բնակվող հայ բնակիչների հեռանալը նրանց անձնական եւ անհատական որոշումն է եւ կապ չունի հարկադիր վերաբնակեցման հետ, եթե հայ բնակիչների մի մասը չի ցանկանում ապրել ադրբեջանական օրենսդրության շրջանակներում, ինչպես նաեւ իշխանություններին ենթարկվել:

«Տարածաշրջանում խաղաղությունն ու անվտանգությունը վերականգնելու համար Հայաստանը պետք է վերացնի հայ բնակիչների վերաինտեգրման գործընթացի խոչընդոտները եւ կենտրոնանա երկու երկրների տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության վրա հիմնված խաղաղության համաձայնագրի բանակցային գործընթացի հաջող ավարտի վրա», - եզրափակել են նրանք:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ

«Ռուսաստանն ուշադրությամբ հետեւում է Արցախի շուրջ ստեղծված իրավիճակին»,- այս հայտարարությունն արել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը՝ մեկնաբանելով ԱՀ նախագահ Սամվել Շահրամանյանի երեկվա հրամանագիրը, ըստ որի՝ հունվարի 1-ից Արցախի Հանրապետությունը կդադարի գոյություն ունենալ:

«Մենք ի գիտություն ենք ընդունել, ուշադիր հետեւում ենք իրավիճակին, առաջին հերթին, իհարկե, կարեւոր է հումանիտար ասպեկտը»,- ասել է Պեսկովը:

Նա նշել է, որ խաղաղապահները շարունակում են աջակցել մարդկանց, որոնցից շատերը Հայաստանի տարածք տեղափոխվելու ցանկություն են հայտնում:

«Բոլոր ցանկացողներին աջակցություն է ցուցաբերվում»,- ընդգծել է ՌԴ նախագահի խոսնակը:

Լրագրողները նրան հարցրել են, թե ով է մեղավոր, որ հայերը սկսել են զանգվածաբար լքել Լեռնային Ղարաբաղը: «Դժվար է ասել՝ ով է մեղավոր, քանի որ նման գործողությունների համար ուղիղ պատճառ չկա, բայց, այնուամենայնիվ, մարդիկ ցանկություն են հայտնում լքել Ղարաբաղի տարածքը: Նրանց մի մասը կարող է, ցանկանում է դա անել ընդմիշտ, մի մասը՝ ժամանակավորապես տրանսֆորմացիայի շրջանում», - պատասխանել է Պեսկովը:

ԱՐՑԱԽԸ ԿԼՈՒԾԱՐՎԻ

Լեռնային Ղարաբաղի նախագահ Սամվել Շահրամանյանը ստորագրել է հրամանագիր՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում բոլոր պետական հիմնարկներն ու կազմակերպությունները լուծարելու վերաբերյալ: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում է Տեղեկատվական շտաբը:

Հրամանագրում նշվում է, որ հաշվի առնելով ստեղծված ռազմաքաղաքական ծանր իրավիճակը եւ ելնելով ԼՂ ժողովրդի ֆիզիկական անվտանգության եւ կենսական շահերի ապահովման առաջնահերթությունից, հաշվի առնելով ռուսական խաղաղապահ ուժերի հրամանատարության միջնորդությամբ Ադրբեջանի հետ ձեռք բերված պայմանավորվածությունն այն մասին, որ հաշվի է առնվելու Լեռնային Ղարաբաղի բնակիչների՝ սեփական ունեցվածքով ու տրանսպորտային միջոցներով ազատ, կամավոր եւ անխոչընդոտ անցումը Լաչինի միջանցքով, որոշվել է՝

«Մինչեւ 2024թ. հունվարի 1-ը լուծարել իրենց գերատեսչական ենթակայության բոլոր պետական հիմնարկները եւ կազմակերպությունները, եւ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը դադարում է գոյություն ունենալ:

Լեռնային Ղարաբաղի բնակչությունը, այդ թվում՝ հանրապետությունից դուրս գտնվող բնակչությունը, սույն հրամանագրի ուժի մեջ մտնելուց հետո ծանոթանում է Ադրբեջանի ներկայացրած վերաինտեգրման պայմաններին ապագայում ԼՂ-ում մնալու (վերադառնալու) հնարավորության մասին անհատական որոշում կայացնելու նպատակով»:

Հրամանագրում նշվում է նաեւ, որ որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԲԱՆԱՁԵՎ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ

«Արցախի եւ Հայաստանի դեմ Ադրբեջանի սարսափելի ագրեսիայի եւ էթնիկ զտման ֆոնին եւս մեկ բանաձեւ եմ ներկայացնում, որի արդյունքում, հուսով եմ, Բաքվին Ամերիկայի Միացյալ Նահանգների օգնությունը կդադարեցվի:

Կապ չունի՝ ինչ են ասում մեր դիվանագետները. եթե այդ ռեժիմին շարունակենք գումար տրամադրել, նրանք էլ կշարունակեն բռնությունները». Ադամ Շիֆ

ՀՈՒՅՍ ՈՒՆԻ

Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ-ն արձագանքել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովում Հռոմի ստատուտի վավերացման վերաբերյալ որոշմանը: «Հռոմի ստատուտի վավերացումը ամենաբացասական հետեւանքներն է ունենալու երկկողմ հարաբերությունների համար: Ռուսաստանը հույս ունի, որ Հայաստանի Հանրապետության ԱԺ-ում կգտնվեն ուժեր, որոնք չեն դակի Հռոմի ստատուտի վերաբերյալ տոքսիկ որոշումը»,- ըստ ՏԱՍՍ-ի՝ հայտնել են Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ-ից:

ՉԻ ՀԱՆԴԻՊԵԼ

Ամենայն հայոց կաթողիկոսը ընդդիմադիրների հետ որեւէ հանդիպում չի ունեցել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում այս մասին ասացին Մայր Աթոռից:

Նշենք, որ մամուլում տեղեկություն է շրջանառվում, թե վերջերս Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը հանդիպել է ընդդիմադիր շրջանակների հետ:

Ըստ այդ նույն տեղեկությունների՝ նրանք քննարկել են իշխանափոխության հարցը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Տեր Եսայի քահանա Արթենյանը հերքեց տեղեկությունը:

«Նման անհեթեթությունների չենք անդրադառնում»,-արձագանքեց նա՝ հավելելով, որ նման հանդիպում չի եղել:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱՐՑԱԽՈՒՄ ՀԱՅ ՉԻ ՄՆԱ

Լեռնային Ղարաբաղի հայության ելքը Ադրբեջանի կողմից իրագործվող էթնիկ զտումների քաղաքականության արդյունքում շարունակվում է: Այս մասին սեպտեմբերի 28-ին՝ կառավարության նիստին, հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Վերլուծությունները ցույց են տալիս, որ առաջիկա օրերին Լեռնային Ղարաբաղում այլեւս հայ չի մնա: Սա էթնիկ զտման եւ հայրենազրկման ուղղակի ակտ է եւ այն, ինչի մասին մենք երկար ժամանակ ահազանգում էինք միջազգային հանրությանը: Միջազգային տարբեր խաղացողների կողմից Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող էթնիկ զտումները դատապարտող հայտարարությունները կարեւոր են, բայց եթե դրանց չհետեւեն կոնկրետ գործողություններ, այդ հայտարարություններն ընդամենը պատմության համար բարոյական վիճակագրություն ստեղծելու շարքում կդիտվեն, որպեսզի հետագայում տարբեր երկրներ իրենց այս հանցագործությունից ֆորմալ առումով տարանջատելու հնարավորություն ունենան՝ ասելով՝ «դե մենք դատապարտել ենք»:

Եթե դատապարտման մասին հայտարարություններին համարժեք քաղաքական ու իրավական բնույթի որոշումներ չեն հետեւում, դատապարտումները դառնում են տեղի ունեցողին համաձայնելու ակտեր»,- նշեց Փաշինյանը:

ՈՐՏԵ՞Ղ Է ԲԵԳԼԱՐՅԱՆԸ

Արցախի նախկին պետնախարար, նախկին ՄԻՊ Արտակ Բեգլարյանը հայտնել է, որ անվտանգ տեղում է գտնվում:

«Քանի որ շատերն են հարցնում, թո՛ւյլ տվեք նշել, որ ես ազատ/անվտանգ եմ:

Թեեւ ես շարունակում եմ ստանալ բազմաթիվ հրապարակային/մասնավոր ատելության վիրավորանքներ/սպառնալիքներ, այնուամենայնիվ, ինձ երբեք չեն տեղեկացրել ադրբեջանական հետապնդման մասին, որի համար որեւէ հիմք չկա:

Անվտանգության նկատառումներից ելնելով՝ ես չեմ կարող հայտնել իմ գտնվելու վայրը»,- «X»-ում գրել է Բեգլարյանը:

ԱՇԽԱՐՀ

ԱՄՆ–Ի ԱՌԱՋԻԿԱ ՔԱՅԼԵՐԸ

Ադրբեջանի կառավարությունը կողջունի միջազգային դիտորդական առաքելության ուղարկումը Լեռնային Ղարաբաղ, եւ ԱՄՆ-ն այդ ուղղությամբ առաջիկա օրերին կաշխատի իր դաշնակիցների եւ գործընկերների հետ: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ճեղազրույցում հայտնել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը:

«Կարող եմ ասել, որ մենք ողջունեցինք քիչ առաջ՝ նախքան իմ ամբիոն բարձրանալը, Ադրբեջանի կառավարության մեկնաբանությունն այն մասին, որ նրանք կողջունեն նման միջազգային դիտորդական առաքելությունը: Պետքարտուղարն ուղղակիորեն նախագահին (խմբ՝. Ադրբեջանի) հորդորում էր դա անել, եւ մենք ուրախ ենք տեսնել, որ նա համաձայնեց դրան: Եվ մենք կաշխատենք մեր դաշնակիցների եւ գործընկերների հետ առաջիկա օրերին, որպեսզի վերջնական հստակ տեսք հաղորդենք այդ առաքելությանը», - ասել է Միլլերը:

Նա նաեւ կրկնել է այն մի շարք առաջնահերթ նպատակները, որոնց Վաշինգտոնը ցանկանում է հասնել տարածաշրջանում, որոնք, Միլլերի խոսքով, շեշտել են ինչպես ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը, այնպես էլ Հայաստանում գտնվող ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ղեկավար Սամանթա Փաուերը եւ ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնականի պաշտոնակատար Յուրի Քիմը:

«Առաջին՝ մենք ցանկանում ենք տեսնել, որ հրադադարը պահպանվում է, երկրորդ՝ մենք ցանկանում ենք տեսնել, որ բավարարվում են հումանիտար կարիքները, ինչը նշանակում է բաց պահել Լաչինի միջանցքը, ապահովել հումանիտար մատակարարումների մուտքը: Դա նաեւ նշանակում է միջազգային դիտորդական առաքելության ուղարկում՝ երաշխավորելու, որ այդ կարիքները բավարարվեն», - նշել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակը:

Նշենք նաեւ, որ Մեթյու Միլլերը հավելել է, որ ԱՄՆ-ն ցանկանում է, ի վերջո, տեսնել, որ կողմերը վերադառնում են բանակցային սեղանի շուրջ, որտեղ կարող են վերջապես հասնել արժանապատիվ, կայուն խաղաղության: Նա շեշտել է, որ ԱՄՆ պետքարտուղարն ուղիղ շփումների մեջ է ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի ղեկավարների հետ, իսկ ամերիկյան մի շարք պաշտոնյաներ ԼՂ-ի նկատմամբ Ադրբեջանի վերջին օրերի բռնություններից հետո այցելել են տարածաշրջան:

Շեշտելով, որ Վաշինգտոնն արել է ամեն բան, որպեսզի խնդիրը լուծվի դիվանագիտական ճանապարհով՝ Միլլերը նշել է, որ համաձայնության պետք է հասնեն հենց կողմերը, որոնք ունեն ուղիղ տարաձայնություններ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարության խոսնակը նաեւ անդրադարձել է Ռուսաստանի դերին վերջին օրերի ընթացքում:

«Անշուշտ, չեմ կարծում, որ Ռուսաստանն արդյունավետ դեր է կատարել վերջին շաբաթվա ընթացքում: Մենք երբեմն տեսել ենք, որ որոշ դեպքերում նրանք նպաստել են բանակցություններին, եւ մենք դա ողջունել ենք, սակայն, անշուշտ, վերջին շաբաթվա ընթացքում նրանց դերն ադյունավետ չի եղել այս իրավիճակում», - ասել է պաշտոնյան:

Նա նաեւ անդրադարձել է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի ձերբակալությանը:

«Մենք տեղյակ ենք ձերբակալության մասին: Մենք ուշադիր հետեւում ենք իրավիճակին», - եզրափակել է նա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՄՆԱ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը կմնա կալանքի տակ. տեղեկացրել է նրա փաստաբան Տիգրան Աթանեսյանը:

«Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Մարաբյանը մերժեց մեր վերաքննիչ բողոքները եւ Արմեն Աշոտյանին թողեց կալանքի տակ»,- հայտնել է Աթանեսյանը:

ՍՏԱՏՈՒՏՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը սեպտեմբերի 28-ին քննարկել է 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը վավերացնելու եւ, կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, «Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին» հայտարարություն ընդունելու մասին նախագիծը:

Այն միաձայն ընդունվեց հանձնաժողովի կողմից եւ կընդգրկվի գալիք լիագումար նիստերի օրակարգ:

ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐԸ ԿՈՒՇԱՆԱՆ

Երեւանի քաղաքապետարանը հայտարարություն է տարածել, որում ասվում է, որ այս օրերին Երեւանի հասարակական տրանսպորտի ավտոբուսների ժամանման միջակայքերը կարող են ավելանալ՝ պայմանավորված ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց ՀՀ տեղափոխելու համար ավտոբուսների տրամադրմամբ. «Պատճառվող ժամանակավոր անհարմարության համար հայցում ենք ձեր ներողամտությունը»:

ԿՀԱՆԴԻՊԵՆ ԵՎԼԱԽՈՒՄ

Սպասվում է, որ Եվլախում Ադրբեջանի ներկայացուցիչ Ռամին Մամեդովը կրկին կհանդիպի Ղարաբաղի հայ բնակիչների ներկայացուցիչների հետ:

Այս մասին հաղորդում են ադրբեջանական լրատվամիջոցները: Նրանք նշում են, որ մոտ ապագայում Եվլախում նախատեսվում է եւս մեկ հանդիպում՝ պատգամավոր Ռամին Մամեդովի եւ Ղարաբաղի ներկայացուցիչների միջեւ:

Նշենք, որ Ադրբեջանի կողմից իրականացրած լայնածավալ հարձակումներից հետո այնտեղ հանդիպումներ կրկին եղել են:

ՉԵՆ ԲՈՂՔԱՐԿԵԼ

Երեւանի ավագանու ընտրությունների արդյունքների բողոքարկման ժամկետը լրացել է սեպտեմբերի 27-ին, մասնակից 14 քաղաքական ուժերից որեւէ մեկը չի բողոքարկել:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում:

«Ընտրություններն անցել են մրցակցային, բուռն, լարված պայմաններում, բայց այն փաստը, որ 14 մասնակիցներից որեւէ մեկը չի բողոքարկել ընտրության արդյունքները, ինքնին փաստում է, որ ընտրական համակարգն իր պարտականություններն ամբողջությամբ կատարել է, եւ ազատ, արդար, թափանցիկ ու մրցակցային ընտրությունները մեզանում արդեն կայացած իրողություն են: Դա նաեւ ընդունում են քաղաքական ուժերը, որոնք մասնակցել են ընտրություններին»,- ասաց Հովակիմյանը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ ՈՒ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Ավարտվել է «Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում կատարված կոռուպցիոն չարաշահումների, վստահված գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակություններ եւ փողերի լվացման դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Նախաքննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն՝ 2015թ. մայիսին «Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի աշխատակիցների կողմից հիմնադրվել է «Հերացի» արհեստակցական կազմակերպությունը, որի նախագահ է ընտրվել Ա. Աշոտյանի մտերիմ Մ. Սիմոնյանը, իսկ հունիսին, համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, համալսարանի ռեկտորի պաշտոնում ընտրվել է Մ. Նարիմանյանը, որից հետո՝2015թ. հոկտեմբերի 1-ին, համալսարանի ֆինանսական գծով պրոռեկտորի նոր բացված հաստիքին նշանակվել է Կ. Հարությունյանը:

Այնուհետեւ Ա. Աշոտյանը համալսարանի ռեկտոր Մ. Նարիմանյանին դրդել է իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործել, այն է՝ առանց գնումների գործընթացի կազմակերպման եւ առանց հոգաբարձուների խորհրդի հաստատման, ուղիղ գնման միջոցով իր հետ ընկերական հարաբերությունների մեջ գտնվող Ի. Սաղաթելյանի ընտանիքին պատկանող «Նավասար» ՍՊ ընկերության «Ծովասար» հյուրանոցային համալիրից գնել երկու բնակարանների կառուցապատման իրավունքներ ընդհանուր 36.994.000 ՀՀ դրամով:

Ապա Աշոտյանի կազմակերպմամբ մեկ այլ արհեստակցական կազմակերպությանը պատկանող առանձնապես խոշոր չափերով գումարի վատնման՝«Հերացի» արհեստակցական կազմակերպությանը դարձնելու եղանակով հափշտակություն կատարելու դիտավորությամբ Մ. Նարիմանյանը նույն կազմակերպության նախագահ Մ. Սիմոնյանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել՝նշված գումարները «Հերացի» արհեստակցական կազմակերպությանը փոխանցելու, այդ գումարներով, Ա.Աշոտյանի հանձնարարությամբ, «Նավասար» ՍՊ ընկերության «Ծովասար» հյուրանոցային համալիրի տնօրեն Վ. Սաղաթելյանից շուկայականից բարձր գներով բնակարանների կառուցապատման իրավունքներ ձեռք բերելու շուրջ, իսկ հիմնադրամի գլխավոր հաշվապահ Լ. Պարսեղյանին Մ. Նարիմանյանը հանձնարարել է կատարել համապատասխան փոխանցումները:

Իր հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով Մ. Նարիմանյանը, Ա. Աշոտյանի գիտությամբ եւ թողտվությամբ, 2015թ. սեպտեմբերի 1-ին համալսարանի կանոնադրության պահանջների խախտմամբ, առանց հոգաբարձուների խորհրդի հաստատման համալսարանի անունից նույն կազմակերպության նախագահ Մ. Սիմոնյանի հետ կնքել է համագործակցության հուշագիր, որի համաձայն՝ Բժշկական համալսարանը պարտավորվել է կազմակերպությանն անդամակցած աշխատակիցների աշխատավարձերի 0,5 տոկոսի չափով գանձումներ իրականացնել եւ փոխանցել կազմակերպությանը, ինչպես նաեւ կազմակերպությանը փոխանցել հուշագրի ստորագրման պահին աշխատողների սոցիալական աջակցության ֆոնդում հավաքագրված գումարը՝ չնշելով դրա չափը:

Կնքված հուշագրի հիման վրա՝ համալսարանից «Հերացի» արհեստակցական կազմակերպությանը փոխանցվել է 185.606.000 ՀՀ դրամ:

Հանցավոր ճանապարհով «Հերացի» արհեստակցական կազմակերպության սեփականությունը դարձած առանձնապես խոշոր չափերով գումարներին օրինական տեսք տալու եւ դրանք օրինական շրջանառության մեջ դնելու, այդկերպ դրանց հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով «Հերացի» արհեստակցական կազմակերպությունը՝ ի դեմս նախագահ Մ. Սիմոնյանի, 2015թ. դեկտեմբերի 21-ին «Ծովասար» հյուրանոցային համալիրի տնօրեն Վ. Սաղաթելյանի հետ կնքել է անշարժ գույքի կառուցապատման իրավունքի առուվաճառքի չորս ձեւական պայմանագիր, որոնցով կազմակերպությունը Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնքի 9-րդ փողոցի 5 հողամասի տարբեր հասցներում ձեռք է բերել 4 տարբեր մակերեսներով բնակարանների կառուցապատման իրավունքներ ընդհանուր 86.192.000 ՀՀ դրամով, ինչպես նաեւ պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ 66.300.000 ՀՀ դրամ արժողությամբ նկուղային ընդհանուր օգտագործման տարածք՝որպես սպորտային դահլիճ, շուկայականից էականորեն բարձր գնով՝ 99.414.000 ՀՀ դրամով: Նշված բնակարանները եւ նկուղային տարածքը եւս մինչեւ 2018 թվականը որեւէ կերպ «Հերացի» արհեստակցական կազմակերպության կամ համալսարանի կողմից չեն օգտագործվել եւ փաստացի գտնվել են նախկին սեփականատիրոջ գույքային ֆոնդում, իսկ համալսարանը վճարել է դրանց սպասարկման գումարը՝ յուրաքանչյուր ամիս 173.000-ական ՀՀ դրամ:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝Ա. Աշոտյանին, Մ. Նարիմանյանին, Մ. Սիմոնյանին մեղադրանք է ներկայացվել:

Մեղադրանքներ են ներկայացվել նաեւ համալսարանի գլխավոր հաշվապահ Լ. Պարսեղյանին եւ ՍՊԸ տնօրեն Ռ. Դավթյանին:

Նախաքննությունն ավարտվել է, եւ նշված անձանց մասով անջատված վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

ՈՒՇԱԳՐԱՎ

ՄԵՂԱԴՐԱՆՔ ԵՆ ԱՌԱՋԱԴՐԵԼ

Ադրբեջանի իշխանությունները մեղադրանք են առաջադրել Ռուբեն Վարդանյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը Պետական անվտանգության ծառայությունից տեղեկանում է, որ, իբրեւ թե, հավաքված ապացույցների հիման վրա՝ բացահայտվել են հանցավոր արարքների էական կասկածներ 1968 թվականին ծնված Ռուբեն Կառլենովիչի Վարդանյանի նկատմամբ (ով ներկայումս հանդիսանում է ՀՀ քաղաքացի)՝ 214-1 (Ահաբեկչության ֆինանսավորում), 279.3 (Մասնակցություն օրենքով չնախատեսված զինված կազմավորումների կամ խմբերի ստեղծման եւ գործունեության մեջ) եւ ԱՀ ՔՕ 318.1 (Օտարերկրացու կամ քաղաքացիություն չունեցող անձի ապօրինի ժամանումը Ադրբեջանի Հանրապետություն) հոդվածներով:

Նրան առաջադրված մեղադրանքի համաձայն՝պարզվել է, որ Ռուբեն Վարդանյանը, լինելով օտարերկրյա քաղաքացի, 2022 թվականի սեպտեմբերին ահաբեկչական սադրիչ գործողություններ կատարելու նպատակով ապօրինի հատել է ԱՀ պետական սահմանը՝շրջանցելով անցակետերը, եւ մուտք գործել ՀՀ տարածք:

Նրան առաջադրված մեղադրանքի համաձայն՝պարզվել է, որ Ռուբեն Վարդանյանը, լինելով օտարերկրյա քաղաքացի, 2022 թվականի սեպտեմբերին ահաբեկչական սադրիչ գործողություններ կատարելու նպատակով ապօրինի հատել է ԱՀ պետական սահմանը՝շրջանցելով անցակետերը եւ մուտք գործել Ադրբեջանի Հանրապետության Ղարաբաղյան տնտեսական շրջանում ռուս խաղաղապահների ժամանակավոր տեղակայման տարածք, մասնակցել է ԱՀ օրենսդրությամբ չնախատեսված զինված կազմավորումների ձեւավորմանն ու գործունեությանը, ինչպես նաեւ մասնակցել է զենքի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի, ռազմական տեխնիկայի եւ բանակային իրերի մատակարարմանը այդ ապօրինի ռազմական կազմավորումներին, որոնք հարձակումներ են իրականացրել գերատեսչությունների, կազմակերպությունների եւ անհատների վրա, որոնք հանգեցրել են մահվան եւ այլ ծանր հետեւանքների:

«Բացի այդ, Վարդանյանը մասնակցել է ահաբեկչության ֆինանսավորմանը՝ միջոցներ հատկացնելով այդ ապօրինի զինված խմբավորումների ահաբեկչական գործունեությունը կազմակերպելու համար: Կատարված ապօրինի գործողությունների համար Ռուբեն Վարդանյանը 2023 թվականի սեպտեմբերի 27-ին ձերբակալվել է եւ որպես մեղադրյալ ենթարկվել է քրեական պատասխանատվության, նրա նկատմամբ, դատարանի որոշմամբ, խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Քրեական գործով քննչական եւ օպերատիվ միջոցառումները շարունակվում են»:

Հիշեցնենք, որ Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանին ադրբեջանցիները երեկ բերման են ենթարկել Լաչինի միջանցքից:

ԿԱՐԵՎՈՐ

ԽԱԲԵՈՒԹՅԱՄԲ ՀԱՓՇՏԱԿԵԼ ԵՆ

Հանցավոր կազմակերպության անդամներ Ա.Ջ.-ն, Վ.Ջ.-ն, Ի.Վ.-ն եւ քննությամբ չպարզված այլ անձինք 2022-2023 թվականների ընթացքում «Whatsapp» հավելվածի միջոցով կապ են հաստատել «List.am» կայքում ապրանքների վաճառքի, ծառայությունների մատուցման հայտարարություններ տեղադրած անձանց հետ, հանդես են եկել որպես գնորդներ կամ ծառայությունների մատուցման պատվիրատուներ եւ, վաճառողի գտնվելու վայրից հեռու լինելու պատրվակով, առաջարկել են նախօրոք կատարել վճարը առցանց եղանակով փոխանցելու միջոցով, իսկ ապրանքները ստանալ «ՀայՓոստ», «Սուրհանդակ», «Իդրամ» առաքանիների միջոցով:

Մասնավորապես, դեպքերից մեկով Ա.Ջ.-ն, Վ.Ջ.-ն, Ի.Վ.-ն եւ քննությամբ չպարզված այլ անձինք 2022 թվականի մայիսի 17-ին «Whatsapp» հավելվածի միջոցով նամակագրական կապ են հաստատել «List.am» կայքում լամպի վաճառքի հայտարարություն տված քաղաքացու հետ եւ վերջինիս ուղարկելով կեղծ հղում՝ հայտնել, որ ապրանքի դիմաց վճարումը ստանալու համար անհրաժեշտ է լրացնել բանկային քարտի տվյալները: Քաղաքացու կողմից բանկային քատի տվյալները լրացնելուց հետո Ա.Ջ.-ն եւ հանցավոր կազմակերպության մյուս անդամները համակարգչային ներգործությամբ հափշտակել են քարտին առկա 575 հազար դրամն ու փոխանցել առցանց դրամապանակի:

Հանցավոր կազմակերպության մասնակիցներն այս եղանակով 2022-2023 թվականների ընթացքում 67 քաղաքացիներից հափշտակել են առանձնապես խոշոր չափերի՝ 19 մլն 38 հազար 349 դրամ: Այնուհետեւ հափշտակված գումարի ծագումը թաքցնելու նպատակով դրանք փոխակերպել են կրիպտոարժույթի, փոխանցել փաստացի իրենց կողմից օգտագործվող էլեկտրոնային դրամապանակներին, որից հետո տիրապետել, պահել, օգտագործել եւ տնօրինել են այդ գումարները:

2023 թվականի սեպտեմբերի 15-ին դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել Ա.Ջ.-ի, Վ.Ջ.-ի եւ Ի.Վ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (համակարգչային հափշտակությունը), 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (փողերի լվացումը) եւ 319-րդ հոդվածի 1-ին մասով (հանցավոր կազմակերպությանը մասնակցելը):

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 43 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարած:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԸՆԴԴԵՄ ՓԱՇԻՆՅԱՆԻ

Տավուշի մարզպետի աշխատակազմը սեպտեմբերի 26-ին «Ֆեյսբուք»-ում հայտարարել է. «Տավուշի մարզում ձեւավորվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տեղավորման ու աջակցության հարցերով զբաղվող աշխատանքային խումբ»: Այդ աշխատանքային խմբում ընդգրկված են Տավուշի մարզպետարանի, Դիլիջանի, Իջեւանի, Նոյեմբերյանի, Բերդի համայնքապետարանների պաշտոնյաներ: Ի՞նչ է ստացվում. վարչապետ Նիկոլ Փաշինյանը մի քանի օր առաջ ուղիղ եթերում բառացի հայտարարեց՝ Լեռնային Ղարաբաղի բնակչությանն ուղիղ սպառնալիք չկա, իսկ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը աշխատանքային խումբ է ստեղծել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տեղավորման ու աջակցության հարցերով զբաղվելու համար: Եթե Արցախի հայերին ուղիղ սպառնալիք չկար, էլ ինչպե՞ս են նրանք բռնի տեղահանվել:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԳՈՐԾԵԼ

2021թ. փետրվարի 26-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Դիլիջանի քոլեջի շրջանավարտ, անձնական գործում իր սեռը «արու» գրած Դավիթ Սարգսյանին նշանակեց Դիլիջան խոշոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար: Դրանից հետո վերջինիս ընտանիքը մեծացրել է իր ունեցած բիզնեսները: Համայնքապետ Դ. Սարգսյանի ընտանիքը Հաղարծին գյուղի հարավային ծայրին՝ գյուղը շրջանցող, սողանքի պատճառով չգործող միջպետական ավտոճանապարհի վրա, ապօրինի կերպով,առանց շինթույլտվության ավտոլվացման կետ է կառուցել. այն հիմա էլ աշխատում է: Վերոհիշյալ ավտոլվացման կետը կառուցված է միջպետական ավտոճանապարհից վտանգավոր՝ 4 մետր հեռավորությամբ: Նախկինում Դ. Սարգսյանն ասել է, որ ավտոլվացման կետը գրանցված է անհատ ձեռներեց, իր եղբայր Սասուն Սարգսյանի անվամբ, ինքը բաժնետեր է: Դիլիջան համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանն իր 2019թ. օգոստոսի գրությունով ավտոլվացման կետի վերաբերյալ հայտնել է, որ իր առաջին իսկ պահանջի դեպքում ապօրինի կառուցված ավտոլվացման կետը պետք է քանդվի: Նախկինում Դիլիջանի համայնքապետարանն ավտոլվացման կետի ապօրինի կառուցման պատճառով 200 հազար դրամի չափով տուգանք է կիրառել: Անօրինական ավտոլվացման կետն այժմ շարունակում է գործել: Դիլիջանի համայնքապետ Դ. Սարգսյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել, թե Հաղարծնի հարավային ծայրին գտնվող, միջպետական ավտոճանապարհի վրա կառուցված, գործող ավտոճանապարհի եզրին գտնվող ավտոլվացման կետը ունի արդյոք կադաստրային վկայական, ում է պատկանում սեփականության իրավունքով, անօրինական ավտոլվացման կետը մինչեւ երբ է գործելու: Դ. Սարգսյանը չի պատասխանել «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ռուսլան Բաքոյանի հեղինակած ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով կարգավորվում են ՀՀ քաղաքացիություն ստանալու հետ կապված որոշակի հարցեր:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ նախագծի հեղինակի հավաստմամբ գործող օրենքով, ի թիվս այլնի, ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձը, որը մինչեւ ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը՝ վերջին երկու տարվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ է գտնվել ՀՀ քաղաքացու հետ եւ այդ երկու տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերի առկայությամբ բնակվել է ՀՀ-ում կամ ունի ՀՀ քաղաքացի զավակ, կամ որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, եւ որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար:

Ռուստամ Բաքոյանն առաջարկում է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմելու հնարավորություն ընձեռել նաեւ ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած այն անձին, որի ծնողն ունի ՀՀ քաղաքացիություն:

Հավելենք, որ առաջարկվում է նաեւ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված հիմքերով ՀՀ քաղաքացիություն ստանալու համար ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած անձի կողմից դիմում ներկայացնելու ժամկետային սահմանափակումը հանել, քանի որ, ըստ հեղինակի, խնդիր է առաջանում, երբ 18 տարին լրացած անձը 3 տարվա ընթացքում չի դիմում քաղաքացիություն ստանալու համար: Հեղինակը տեղեկացրել է, որ «Հայաստանում ծնված լինելու» վերաբերյալ դրույթը դուրս է գալիս գործող օրենքից, քանի որ տվյալ երկրում ծնված լինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ քաղաքացիություն ստանալու համար:

Նշվել է նաեւ, որ Կառավարությունը ներկայացրել է առաջարկություններ, որոնք ընդունվել են, ինչի արդյունքում էլ նախագիծը լրամշակվել է:

Ըստ Ռուստամ Բաքոյանի՝ հարցը քննարկվել է շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Հարակից զեկուցող, Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ալխաս Ղազարյանը ողջունել է նախագծի ընդունումը եւ գործընկերներին կոչ արել կողմ քվեարկել:

ՀՀ ներքին գործերի նախարարության Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետ Արմեն Ղազարյանը ներկայացրել է Կառավարության դրական եզրակացությունը: Նա նաեւ առաջարկել է շտկել տեխնիկական բնույթի վրիպակը:

Քննարկման արդյունքում հանձնաժողովականները դրական եզրակացություն են տվել օրենսդրական նախաձեռնությանը: Այն քննարկվել է ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի՝ սեպտեմբերի 28-ի հերթական նիստում:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ

ՉԵՆ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ

70 500 բռնի տեղահանված մեր հայրենակիցներից այս պահին 13 922-ը արդեն իսկ հաշվառվել եւ տեղակայվել է որեւէ մարզի համայնքում՝ հյուրանոցներում, հյուրատներում, առանձնատներում: Այդ մասին սեպտեմբերի 28-ին՝ Հումանիտար կենտրոնի աշխատանքները ներկայացնելիս, ասաց ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը:

ՏԿԵ նախարարը ներկայացրեց նաեւ ժամը 13:00-ի դրությամբ ԼՂ-ից բռնի տեղահանվածների բաշխվածությունը՝ ըստ մարզերի:

Ըստ այդմ՝ Արագածոտնի մարզում 820 մարդ է տեղակայվել, Արարատում՝ մոտ 2200, Արմավիրում՝ 1049, Գեղարքունիքում՝ 1349, Լոռիում՝ 527, Կոտայքում՝ 3594, Շիրակում՝ 763, Սյունիքում՝ 1918, Վայոց ձորում՝ 1027, Տավուշում՝ 678:

«Մենք հիմա ստեղծել ենք ամբողջ հանրապետության բոլոր բնակավայրերի համար մի մեծ համակարգ, որտեղ օրվա մեջ 3 անգամ մուտքագրում ենք տվյալները, թե որ բնակավայրում քանի բնակիչ ավելացավ, եւ նաեւ մուտքագրում ենք, թե որտեղ ավելացավ՝ հյուրանոցներում են, հյուրատներում են, հյուրընկալող ընտանիքում, թե վարձով տներում են»,- ասաց նախարարը՝ նշելով, որ տեղակայման պահից սկսած՝ նրանց կարիքները հոգալու են:

Գնել Սանոսյանի խոսքով՝ շատ արցախցիներ չեն նախընտրում պետության կողմից առաջարկած կեցության վայրերը, ինչն իրենց աշխատանքում խնդիրներ է ստեղծում: Այդուհանդերձ, նա վստահեցրեց, որ բոլորին են կացարան տալու:

ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ՝ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Կապանում իր գլխավոր հյուպատոսության աշխատանքին նախապատրաստվելիս ՌԴ ԱԳՆ-ն առաջնորդվում է 2024 թվականի սկզբին դրա բացմամբ: Այս մասին Sputnik Արմենիայի հետ զրույցում ասել է Կապանում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսություն բացելու հարցով ՌԴ ԱԳՆ առաջատար խմբի ղեկավար Անդրեյ Շոնինը: Ներկայումս, հավելել է նա, ընթանում է աշխատակիցների համար ծառայողական եւ բնակելի տարածքների ընտրություն:

ՌԴ դիվանագիտական ներկայացուցչություն բացելու դրդապատճառներն ակնհայտ են, նկատել է դիվանագետը՝ հիշեցնելով, որ Սյունիքի մարզում բավականին մեծ թվով ՌԴ քաղաքացիներ են ապրում: Նրանք Մեղրիի սահմանապահ ջոկատի ծառայողներ են (Իրանի հետ սահմանին - խմբ.):

«Սյունիքի մարզի աշխարհագրական դիրքը, Երեւանից նրա հեռավորությունը խոսում են այն մասին, որ այստեղ հյուպատոսական ներկայությունն ուղղակի անհրաժեշտ է: Մեզ մոտ գործում է Գյումրիում գլխավոր հյուպատոսություն, եւ Հայաստանի հյուսիսում ՌԴ հյուպատոսական ծառայություններ ստանալ ցանկացողները կարող են դիմել այնտեղ»,-ասել է Շոնինը:

Հյուպատոսությունում, ասել է նա, կմատուցվի ծառայությունների նույն փաթեթը, ինչ Ռուսաստանի ցանկացած այլ հյուպատոսական հաստատությունում աշխարհի ցանկացած կետում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ՃՏՊ. 1 մարդ զոհել է, 27-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ

ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ

ՀՀ 2024 թ. պետական բյուջեի դեֆիցիտը կկազմի 340 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 3.2 տոկոսը, որի արդյունքում պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը 2024 թ. տարեվերջին կկազմի 48.4 տոկոս: Այս մասին սեպտեմբերի 28-ին՝ կառավարության նիստին, հայտարարեց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը՝ ներկայացնելով 2024 թ. ՀՀ պետական բյուջեի նախագիծը:

«Այսպիսի մակարդակում պարտքի պահպանումը հնարավորություն է ընձեռնում պահպանել ՀՀ վարկանիշի դրական միտումները, ստեղծել լրացուցիչ կայունության պաշար ապագա հնարավոր ռիսկերին դիմակայելու համար»,- ընդգծեց նախարարը:

Վահե Հովհաննիսյանը ըստ նախարարությունների ներկայացրեց, թե որ գերատեսչությունը որքան գումար կստանա 2024 թ.-ին:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության բյուջեն 2024 թ. կկազմի 92 մլրդ դրամ, որը 27,4 մլրդ դրամով կամ 41.9 տոկոսով ավելի է 2023 թ-ից.:

«Այստեղ ունենք նոր նախաձեռնություններ՝ արդյունագործական-խեցգետնաբուծության զարգացման ուղղությամբ 300 մլն դրամ, ջերմատնային տնտեսությունների զարգացման համար՝ 1.1 մլրդ դրամ եւ այլն»,- նշեց ՀՀ ֆինանսների նախարարը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության բյուջեն կկազմի 745 մլրդ դրամ, որը 91.5 մլրդ դրամով կամ 14 տոկոսով ավելի է նախորդ տարվանից:

Վահե Հովհաննիսյանը նշեց, որ 2024 թ. անկանխիկ եղանակով վճարումներ կատարող կենսաթոշակառուների միջին տարեկան թիվը նախատեսում են, որ կկազմի 162 հազար: Ինչ վերաբերում է անկանխիկ եղանակով գործարքներից ստացված հետվճարին, ապա 2023 թ. 2 մլրդ դիմաց՝ 2024 թ. կանխատեսնում են, որ այս թիվը կկազմի 7.6 մլրդ դրամ:

2024 թ. նվազագույն կենսաթոշակը կկազմի 36 հազար դրամ:

ՀՀ առողջապահության նախարարության բյուջեն կլինի 168 մլրդ դրամ, որը 26 մլրդ դրամով կամ 18.4 տոկոսով ավելի կլինի 2023 թվականից:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության բյուջեն կկազմի 345 մլրդ դրամ, որը 95 մլրդ դրամով ավելի կլինի 2023 թ.:

Վերջում ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը խնդրեց 2024 թ. ՀՀ պետական բյուջեն մինչեւ Ազգային ժողովի հաստատմանն ուղարկելը ժամանակ տալ իրենց՝ տեխնիկական շտկումներ անելու համար:

Կառավարությունը հաստատեց ներկայացված բյուջեի նախագիծը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Կորել է «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ դրամարկղի գիրքը: Հասցե՝ ք. Երեւան, Դավիթաշեն 4 թղմ. 34 շ. բն.17: ՀՎՀՀ՝ 00127455:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Կորել է Անի Մանվելի Ղայթանջյանի դիպլոմը, ըստ որի՝ նա ավարտել է «Հայբուսակ» բազային քոլեջը, եւ նրան շնորհվել է բուժքույր-կոսմետոլոգ-մերսողի որակավորում:

ՆԻՍՏ

ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհուրդը գումարել է հերթական նիստը, որը վարել է նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քննարկվել է հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման մեկնարկը 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում եւ պետական ուսումնական հաստատությունների տարածքների նպատակային օգտագործման խնդիրը:

Խորհրդի անդամ Գայանե Մադաթյանի խոսքով՝ օգոստոսյան խորհրդակցությունների ընթացքում հանգամանալից ներկայացվել է 2023-2024 ուստարվանից բոլոր դպրոցներում հանրակրթության նոր չափորոշչի ներդրման սահուն ընթացակարգը, սակայն դպրոցները դեռեւս պատրաստ չեն դրա լիարժեք ներդրմանը: Ըստ նրա՝ չկան համապատասխան սարքավորումներով հագեցած լաբորատորիաներ՝ բնագիտական առարկաների փորձարարական մասն ապահովելու համար, եւ նման հնարավորություն ունեն հիմնականում մայրաքաղաքի սակավաթիվ դպրոցներ: Մադաթյանը նաեւ նշել է, որ 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների սովորողներն իրենց ուստարին սկսել են առանց դասագրքերի, որոնք դպրոց են հասել ուշացումով:

Ի պատասխան՝նախարարի տեղակալը նշել է, որ լաբորատորիաներով վերազինվել են Տավուշի եւ Արմավիրի մարզերի ավագ դպրոցները, առաջիկայում լաբորատորիաներ կստանան Արագածոտնի դպրոցները, իսկ մինչեւ 2026 թվականը՝ հանրապետության բոլոր ուսումնական հաստատությունները:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ օրակարգի երկրորդ հարցը՝պետական ուսումնական հաստատությունների տարածքների նպատակային օգտագործման վերաբերյալ, զեկուցել է խորհրդի անդամ Էռնեստ Ավանեսովը: Նրա խոսքով՝ հանդիսանալով Վ. Բրյուսովի պետական համալսարանի ֆիզիկական կուլտուրայի եւ քաղաքացիական պաշտպանության ամբիոնի վարիչ՝այս հարցն իրեն մտահոգում է մի քանի տեսանկյունից: Ըստ Էռնեստ Ավանեսովի՝ գործող օրենքով «Ֆիզիկական կուլտուրա» առարկան պարտադիր է բոլոր ուսումնական հաստատություններում, սակայն մեծ դժվարություններ են առաջանում՝ հատկապես դահլիճային սուղ պայմանները հաշվի առնելով: Նա նշել է, որ հատկապես քաղաքի կենտրոնում մի շարք ուսհաստատությունների նկուղային հատվածներ, որոնք կարող են օգտագործվել մարզական պարապմունքները կազմակերպելու համար, ժամանակին օտարվել կամ տրվել են երկարաժամկետ վարձակալության եւ ծառայում են այլ նպատակների համար:

Նա անդրադարձել է նաեւ դպրոցների մարզադահլիճների խնդիրներին՝ ընդգծելով, որ դրանք չեն համապատասխանում հանրակրթության նոր չափորոշչի պայմաններին: «Դահլիճային եւ գույքային պայմաններն այսօր լուրջ խնդիր են հանդիսանում հանրակրթական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար»,- նշել է Էռնեստ Ավանեսովը:

Ի պատասխան՝ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը նշել է, որ զեկուցողի հարցերը վերաբերում են ենթակառուցվածքների առկայությանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման եւ անվտանգության տեսակետից:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ՊԵՏԲՅՈՒՋԵԻՑ ԿՀԱՏԿԱՑՎԻ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների համար 2024 թվականին ՀՀ պետբյուջեում նախնական 10 մլրդ դրամ կհատկացվի: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին սեպտեմբերի 28-ի Կառավարության նիստում հայտարարեց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը՝ ներկայացնելով 2024 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագիծը:

«Մենք բյուջեն հաստատում ենք այնպիսի միջավայրում, երբ ունենք տասնյակ հազարավոր բռնի տեղահանված փախստականներ, որոնց պետք է ապահովենք առաջնային՝ հոգատարությամբ, իսկ միջնաժամկետ հատվածում՝ նաեւ նրանց արժանապատիվ կեցությունը: Այս պահին, չունենալով բռնի տեղահանվածների քանակի վերաբերյալ հստակ թիվ, մենք բյուջեում հստակ տող ենք սահմանել նրանց վերաբերյալ, որտեղ նախնական նախատեսել ենք 10 մլրդ դրամ, որի չափն անհրաժեշտության դեպքում կավելացնենք»,- նշեց նախարարը:

Նրա խոսքով՝ 2024 թվականի ՀՀ պետական բյուջեի հիմքում դրվել են ռիսկերի կառավարման նոր մոտեցումներ, որոնք բխում են ներկա տուրբուլենտ աշխարհում եւ տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններից, որոնք կյանքի անբաժան մասն են դարձել:

«Այս պայմաններում մենք հետեւողականորեն բարելավում ենք մեր կանխատեսման գործիքները, որոնց հիման վրա՝ կազմում ենք մի շարք սցենարներ, որոնցից ընտրում ենք մեկը եւ դնում բյուջեի հիմքում: Մնացած սցենարները հնարավորություն են տալիս քանակապես գնահատել ռիսկերն ու դրանց հիման վրա ձեւավորել պահուստներ, որոնք պետք է ֆինանսական ապահովության բարձիկներ հանդիսանան հիմնական ռիսկերի նյութականացման, ինչպես նաեւ անկանխատեսելի ծախսերի ի հայտ գալու դեպքում»,- ասաց Հովհաննիսյանը:

Նա ընդգծեց, որ, չնայած դժվարին մարտահրավերներին, ՀՀ տնտեսությունը դրսեւորել եւ շարունակում է դրսեւորել բարձր դիմադրողականություն:

Նախարարի խոսքով՝ տնտեսական աճի եւ ակտիվության տեմպերը շարունակում են բարձր մնալ, երկնիշ տնտեսական աճը շարունակվել է նաեւ այս տարվա ընթացքում: Առաջին եռամսյակում արձանագրվել է 10.5 տոկոս տնտեսական աճ, իսկ 2023 թ. հունվար-օգոստոս ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշի 10.4 տոկոս աճ է եղել: 2023 թվականին տնտեսական աճը կանխատեսվում է ՀՀ կառավարության թիրախավորած 7 տոկոսի շրջանակում, որը ներկա միտումների պայմաններում կարող է նույնիսկ ավելին լինել:

Հովհաննիսյանը ավելացրեց, որ 2024 թվականին եւս կանխատեսվում է բարելավում շուրջ 0.75 տոկոսային կետով: Դրա արդյունքում հարկային եկամուտները կկազմեն 2 տրիլիոն 566 մլրդ դրամ՝ 2023 թվականի ճշտված բյուջեի հարկային եկամուտները գերազանցելով 342 մլրդ դրամով կամ 15.4 տոկոսով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԵԿԵՂԵՑԻ

ԱՂՈԹՔ՝ Ի ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ հոկտեմբերի 1-ը հռչակվել է Արցախի համար համազգային աղոթքի օր, որի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ Հայաստանի ու Սփյուռքի բոլոր եկեղեցիներում հավատացյալ Սուրբ Պատարագի կկատարվի աղոթքի հատուկ կարգ:

Համազգային աղոթքի կապակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից թեմեր կտարվեն սրբազան մասունքներ մեր ժողովրդի հոգեւոր մխիթարության եւ օրհնության համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ամենայն հայոց հայրապետի հանդիսապետությամբ, Սրբազան Պատարագը կմատուցվի Սուրբ Տրդատի բաց խորանում ժամը 10:30-ին: Այս առիթով դուրս կբերվի Աստվածամուխ Սուրբ Գեղարդը, որը հավատացյալների երկրպագության համար բաց խորանում կմնա մինչեւ Երեկոյան ժամերգությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է թեմերի եկեղեցիներ տարվող սրբազան մասունքների ցանկը՝

Արարատյան Հայրապետական թեմ (Երեւան)

Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի կտարվի Սուրբ Սարգսի մասունքակիր աջը:

Սուրբ Հովհաննես եկեղեցի կտարվի Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքը:

Շիրակի թեմ

Գյումրու Սուրբ Նշան եկեղեցի կտարվի Սուրբ Խաչափայտի մասունքը:

Գյումրու Սուրբ Հակոբ եկեղեցի կտարվի Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի մասունքը:

Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի կտարվի Գեւորգ զորավարի մասունքը:

Գուգարաց թեմ

Վանաձորի Սուրբ Նարեկացի եկեղեցի կտարվի Սուրբ Թովմաս առաքյալի մասունքը:

Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցի կտարվի Սուրբ Վարվառա կույսի մասունքը:

Արմավիրի թեմ

Արմավիրի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցի կտարվի Սուրբ Գայանե կույսի մասունքը:

Սյունյաց թեմ

Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցի կտարվի Սուրբ Թադեոս առաքյալի մասունքը:

Սիսիանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի կտարվի Սուրբ Ստեփանոս Նախավկայի մասունքը:

Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եւ Քաջարանի Վերին Հանդի Սուրբ Աստվածածին եկեղեցիներ կտարվեն Սուրբ Մատթեոս Ավետարանչի եւ Սուրբ Անդրեաս առաքյալի մասունքները:

Արագածոտնի թեմ

Օհանավանի Սուրբ Հովհաննես եկեղեցի կտարվի Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքը:

Կոտայքի թեմ

Կեչառիսի վանական համալիր կտարվի Սուրբ Գեւորգ զորավարի մասունքը:

Հրազդանի Սուրբ Աստվածածին եկեղեցի կտարվի Սուրբ Ղուկաս Ավետարանչի մասունքը:

Գեղարքունյաց թեմ

Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցի կտարվի Սուրբ Հռիփսիմե կույսի մասունքը:

Վարդենիսի Սուրբ Աստվածածին եկեղեցի կտարվի Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքը:

Վայոց ձորի թեմ

Եղեգնաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցի կտարվի Սուրբ Խաչափայտի մասունքը:

Տավուշի թեմ

Վարագավանք կտարվի Սուրբ Խաչափայտի մասունքը:

Արթիկի թեմ

Արթիկի առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի կտարվի Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքը:

Մասյացոտնի թեմ

Արտաշատի Սուրբ Հովհաննես եկեղեցի կտարվի Սուրբ Թադեոս առաքյալի մասունքը:

ՍՊՈՐՏ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ՝ ԱՌԱՋԱՏԱՐ

Պատմության մեջ առաջին անգամ կատալոնական «Ժիրոնան» գլխավորել է Իսպանիայի առաջնության մրցաշարային աղյուսակը. հաղորդում է El Partidazo de COPE-ը:

7-րդ տուրում «Ժիրոնան» 2:1 հաշվով պարտության է մատնել «Վիլյառեալին» եւ ունի 19 միավոր: Երկրորդ տեղում գտնվող «Ռեալը» վաստակել է 18 միավոր («Վիլյառեալ» - «Ժիրոնա»՝ 1:2):

ՌՈՆԱԼԴՈՒԻ ՌԵԿՈՐԴԸ

Պորտուգալիայի հավաքականի եւ Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրի» 38-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն պատմության մեջ առաջին ֆուտբոլիստն է, որը պրոֆեսիոնալ մակարդակում 1000 հանդիպում է ավարտել առանց պարտության. հաղորդում է Ֆուտբոլային պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան (IFFHS):

1000-րդ հանդիպումը եղել է ասիական Չեմպիոնների լիգայի խմբային փուլի առաջին խաղը Իրանի «Պերսեպոլիսի» հետ: «Ալ Նասրը» հաղթել էր 2:0 հաշվով:

Ռոնալդուն կարիերայի ընթացքում ունեցել է 776 հաղթական խաղ, 224 հանդիպում նրա մասնակցությամբ ավարտվել է ոչ-ոքի:

Ռոնալդուն «Ալ Նասր» է տեղափոխվել այս տարվա հունվարին: Նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2025 թվական:

«ԻՆՏԵՐ»-Ը ՔԻՋԵՑ

Իտալիայի ֆուտբոլի առաջնության՝ Սերիա Ա-ի 6-րդ տուրում «Ինտեր»-ը սեփական հարկի տակ ընդունեց «Սասուոլո»-ին:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Միլանում կայացած խաղի մեկնարկային րոպեներին եւ առաջին կեսում, առհասարակ, «Ինտեր»-ը քիչ առավելություն ուներ, գրոհում էր, իսկ «Սասուոլո»-ն էլ շեշտը դրել էր հակագրոհների վրա: Առաջին կեսի վերջնամասում «Ինտեր»-ն առաջ անցավ հաշվի մեջ: Գոլի հեղինակ դարձավ Դյումֆրիսը:

Երկրորդ կեսի մեկնարկին՝ 54-րդ րոպեին, «Սասուոլոն»-ն հավասարեցրեց հաշվի տարբերությունը: Բարջամին դարձավ գոլի հեղինակ: 9 րոպե անց «Սասուոլոն»-ն արդեն առաջ անցավ հաշվի մեջ: Գնդակն իր ակտիվում գրանցեց Բերարդին:

«Ինտեր»-«Սասուլո»՝ 1:2:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի մեկնարկային կազմում էր, սակայն փոխարինվեց 67-րդ րոպեին:

Այս տուրից հետո էլ «Ինտեր»-ը մնում է Սերիա Ա-ի մրցաշարային աղյուսակի առաջատարը: Թիմն ունի 15 միավոր:

ՄԵԿՆԱՐԿ

ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԸ՝ ԿԻԹԱՌՈՎ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը ձեռքն է վերցրել դիվանագիտության սիրելի գործիքներից մեկը՝ իր կիթառը. գրել է AFP-ն:

Բլինքենը ցուցադրել է կիթառ նվագելու իր հմտությունները՝ գործի դնելով երաժշտական դիվանագիտության նոր նախաձեռնությունը, որի շրջանակում Միացյալ Նահանգները լավագույն արտիստներին կուղարկի այնպիսի երկրներ, ինչպիսին են Չինաստանը եւ Սաուդյան Արաբիան:

Պետդեպարտամենտի ընդունարանում ջազի աստղեր Հերբի Հենքոկի, Դեյվ Գրոուլի, ինչպես նաեւ ծագող աստղ Գեյլի ելույթից հետո Բլինքենն ինքն է բեմ բարձրացել:

Բլինքենը ռիթմ-կիթառով կատարել է բլյուզի լեգենդ Մադի Ուոթերսի Hoochie Coochie Man-ը:

Նոր նախաձեռնության շրջանակում Հենքոկը կմեկնի Հորդանան ջազ-դաշնակահար Դյուք Էլինգտոնին նվիրված միջոցառման շրջանակում, ինչպես նաեւ առաջին ուղեւորությունը կկատարի Սաուդյան Արաբիա:

Ֆիլադելֆիայի նվագախումբը կմեկնի Չինաստան նոյեմբերին, որպեսզի նշի այդ ասիական երկրում 1973թ. իր առաջին շրջագայության 50-ամյակը, որն այն ժամանակ գրեթե փակ էր աշխարհի համար:

«Մի քանի սերունդ ԱՄՆ դիվանագիտությունն աշխատել է, որպեսզի օգտագործի երաժշտության ուժը կամուրջներ գցելու եւ համագործակցության հաստատման համար ամերիկացիների եւ ամբողջ աշխարհի մարդկանց միջեւ»,- ասել է Բլինքենը: «Պետք չէ պատմություն իմանալ, որպեսզի կապեք երաժշտության հետեւում գտնվող զգացումները, որովհետեւ երաժշտությունն իր էությամբ կապ է՝ արմատացած ընդհանուր մարդկության մեջ»,- ասել է նա:

ԿԱԴՐԵՐ ԵՆ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ

Entertainment Weekly պարբերականը հրապարակել է «Նապոլեոն» կենսագրական ֆիլմի մի քանի նոր կադրեր: Դրանում գլխավոր դերը կատարել է «Օսկարի» դափնեկիր Խոակին Ֆենիքսը:

Ֆիլմը կպատմի Նապոլեոն Բոնապարտի՝ ֆրանսիական գահ բարձրանալու, կնոջ՝ Ժոզեֆինայի (Վանեսա Կիրբի) հետ նրա հարաբերությունների եւ 1812 թվականի պատերազմում կրած պարտության մասին:

Ֆիլմի ռեժիսորը Ռիդլի Սքոթն է: Սցենարի վրա աշխատել է Դեւիդ Սկարպան: «Նապոլեոնի» պրեմիերան ԱՄՆ-ում տեղի կունենա նոյեմբերի 22-ին, որից հետո ֆիլմը հասանելի կլինի Apple TV+սթրիմ ծառայությունում:

● *Սեպտեմբերի 30-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սիրային իրարանցում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՕՐԻՆԱԿԱՆԱՑՈՒՄ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ օրինականացնել 1990-ականներին հորս կառուցած տունը. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Մարիանննա Լեւոնյան (59 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անհրաժեշտ է առնվազն երեք հարեւաններից վերցնել հավաստում այն մասին, որ այդ տունը կառուցվել է 1990-ական թվականներին Ձեր հոր կողմից, որը պետք է ներկայացնեք Ձեր հասցեն սպասարկող համատիրություն, իսկ համատիրության բացակայության դեպքում՝ համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկանք այն մասին, որ տունը կառուցված է 1990-ական թվականներին: Դրանից հետո անհրաժեշտ է դիմել մասնագիտացված չափագրական ծառայություններ մատուցող կազմակերպություն՝ պատվիրելով Ձեր սեփական տան ամբողջական չափագրում: Այնուհետեւ անհրաժեշտ է չափագրական եզրակացությունը, տեղեկանքը, հողամասի սեփականության իրավունքի վկայականը, բնակելի տան լուսանկարները ներկայացնել քաղաքապետարան՝ խնդրելով թույլատրել օրինականացնել կառուցված ինքնակամ շինությունը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համայնքի ղեկավարը պարտավոր է Ձեր դիմումը ստանալուց հետո՝30-օրյա ժամկետում կայացնել ինքնակամ շինությունը օրինականացնելը թույլատրելու կամ մերժելու մասին որոշում:

ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ես դժգոհ եմ մեր շենքի համատիրության գործունեությունից եւ ցանկանում եմ դուրս գալ համատիրության կազմից՝ չվճարելով գումար: Խնդրում եմ ասել՝ ինչ է աՁիraժեcs անել համատիրության անդամների ցանկից (կազմից) դուրս գալու համար: Ո՞ւր ռtsf է դիմեմ:

Լիաննա Մնացականյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեւանի քաղաքապետարանին ուղղված հարցմանն ի պատասխան՝ աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունից տեղեկացնում են, որ շենքի շինության սեփականատերը համատիրության անդամ է համարվում շենքի կառավարման մարմնին դիմում ներկայացնելուց հետո՝ հաջորդ օրվանից: (Հիմք՝ «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը):

Համատիրության անդամի անդամությունը կարող է դադարել՝ սեփական դիմումի համաձայն:

Երեւանի քաղաքապետարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համատիրության անդամի անդամությունը կարող է դադարել նաեւ համատիրության անդամի՝ շենքում շինության նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու հաջորդ օրվանից: (Հիմք՝ «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետը): Երկու դեպքում էլ համատիրության անդամությունը դադարած անձը համատիրության պարտավորությունների համար կրում է պատասխանատվություն իր կողմից համատիրության կանոնադրությամբ նախատեսված վճարի չմուծված չափի սահմաններում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեկ Հակակոռուպցիոն դատարանում ընթացավ ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի գործով դատական նիստը:

«Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցը հայտնում է, որ դատարանում Վլադիմիր Գասպարյանն իրեն վատ է զգացել, նրան առաջին բուժօգնություն են ցույց տվել: Նիստն ընդմիջվել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 8 +17 + 23
Կոտայքի լեռներ	+ 5 + 7 +15 + 19
Կոտայքի նախալեռներ	+ 11 + 12 +21 + 24
Գեղարքունիք	+ 4 + 9 +15 + 19
Լոռի	+ 5 + 10 +14 + 19
Տավուշ	+ 8 + 13 +16 + 21
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +14 + 18
Արագածոտնի նախալեռներ	+10 + 13 + 20 + 25
Արարատ	+12 + 15 +24 + 27
Արմավիր	+9 + 12 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 9 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 12 + 15 +25 + 27
Սյունիքի հովիտներ	+13 + 16 +21 + 24
Սյունիքի նախալեռներ	+ 7 + 10 +15 + 17
ԼՂՀ	+ 12 + 15 +21 + 25
Երեւան	+ 19 + 21 +26 + 28

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*